

ՌԻՄԱԿՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 5
ԱՊՐԻԼ
APRIL / AVRIL
YEAR / ANNÉE 1
NO.5 2017

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՅԱՐԵԱ՛Ի ԱՍՏՈՒԱԾ



ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմին

Հրաշափառ Յարութեան անտիպը դարձեալ կը հնչէ ամենուրեք: Հրեշտակները երկնքի մէջ կ'ուրախանան մարդոց համար եւ երկինքէն երկիր իջնելով մեծագոյն լուրը կը փոխանցեն աշխարհին, թէ ՅԱՐԵԱ Ի ԱՍՏՈՒԱԾ:

Աւագ Շաբթուան ընթացքին հաղորդ կը դառնանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կարեւորագոյն խօսքերուն, գործերուն ու սրբազան տնօրինութիւններուն: Աստուած, Իր անհուն սիրովը յայտնուեցաւ, իսկ մարդը իր անսահման չարութեամբն ու ապերախտութեամբը: Աստուած կը յայտնուի մարդոց փրկութեան համար չարչարուելու Իր անըմբռնելի խորհուրդով, իսկ մարդը աստուածաչարչար դառնալու իր անբացատրելի ապերախտութեամբ:

Անմահութիւն պարգեւող Քրիստոս, որպէս մարդ թաղուեցաւ, սակայն երրորդ օրը յարութիւն առաւ եւ Իր յարութեամբ մեր իսկ յարութեան երաշխիքը տուաւ: Աստուածորդին Իր յարութեամբ մահուան վրայ յաղթանակ տարաւ եւ աստուածապարգեւ յաղթական նոր կեանք պարգեւեց մարդկութեան:

Հրաշափառ Յարութեան տօնը յաղթանակի տօնն է: Կեանքի յաղթանակը ընդդէմ մահուան:

Հայ ժողովուրդը այն ժողովուրդներէն մէկը եղաւ, որ գիտցաւ մեռնիլ ապրելու սիրոյն եւ վիմափոր գերեզմանը կեանքի, լոյսի ու յոյսի աղբիւրի վերածեց: Հայ ժողովուրդը Աստուածորդին յարութեան մէջ տեսաւ իր իսկ յարութիւնը, յաւերժութիւնն ու անմահութիւնը:

Այսօր, եկէ՛ք պատրաստ ըլլանք գերեզմանելու մեր մեղքերը, այսինքն՝ կեղծիքը, նախանձը, ատելութիւնը, թշնամութիւնը, դիակալութիւնը, հպարտութիւնը, նիւթապաշտութիւնը եւ այլ տեսակի մեղքերը, պատրաստ ըլլանք յարութիւն առնելու Քրիստոսի հետ, այսինքն՝ վերանորոգուելու Քրիստոսի բերած ՆՈՐ ԿԵԱՆՔՈՎ:

Ազգովին վերանորոգենք մեր հաւատքը, յարութեան շունչով քալենք դէպի ապագայ եւ յարութեան ճամբով դէպի լուսաւոր ճանապարհ:

Ահա պատգամը մեծագոյն հրաշքին՝ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ:

Մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Հրաշափառ Մ. Յարութեան տօնին առիթով, ընդունեցէք մեր սրտագին շնորհաւորութիւնները: Ջերմապէս կը մաղթենք, որ Տէրը ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք ու արեւշատ օրեր:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

ՏԵՍՆԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ո՛վ շունչ, եկո՛ւր չորս հովերէն ու փչէ՛ այս մեռելներուն վրայ, եւ անոնք կը կենդանանան: (Եզ 37.9)

Եզեկիէլ մարգարէի տեսիլքին մէջ լուսած ձայնն է այս, Աստուծոյ ձայնը: Բարեկոնի գերութեան ժամանակ, վեցերորդ դարուն նախքան Քրիստոս, երբ Եզեկիէլ մարգարէն տեսաւ իր ժողովուրդին հոգեվիճակը, ոգիի ուժացումն ու այլասերումը, այն ժամանակ չորցած ոսկորներու տեսիլքը երեւցաւ անոր, ուր Տիրոջ ձայնը անոր ըսաւ. «Մարդո՛ւ որդի, մարգարեացի՛ր այդ ոսկորներուն վրայ եւ ըսէ՛ անոնց չորցած ոսկորներ, լսեցէ՛ք Տիրոջ պատգամները: Այսպէս կ'ըսէ՛ Տէր Աստուած. «Ահա ես ձեր վրայ կենդանի շունչ պիտի բերեմ, ու պիտի ապրիք, ջիղեր պիտի դնեմ ձեր վրայ, միս պիտի աճեցնեմ ձեր վրայ եւ մորթով պիտի ծածկեմ ձեզ...»: Եւ իրօք այդպէս եղաւ. այդ ընդարձակ դաշտին մէջ հազարաւոր ոսկորները վերակենդանացան, բայց փաց կենդանութեան շունչը: Նոյն ձայնը հրամայեց. «Ո՛վ շունչ, եկո՛ւր չորս հովերէն, ու փչէ՛ այս մեռելներուն վրայ, եւ անոնք կը կենդանանան: Արդարեւ անոնք շունչ ստացան, կենդանացան, ոտքի կանգնեցան»: Ինչպիսի ճակատագիր. նոյն տեսիլքէն 27 դար ետք, այս անգամ այդ նոյն մահասփիւռ շունչը փչեց հայ ժողովուրդին վրայ, եւ ան թշուեցաւ Տէր Զօր, Ռաս Ուլ Այն, Մարկատէ, ու այդ անապատներուն մէջ անոր ոսկորները տարածուեցան եւ դարձան չորցած ոսկորներ: Նոյն այդ աստուածային ձայնը այս անգամ եկաւ մահասփիւռ այդ ջարդերէն ազատած որբին ըսելու.

«Հայո՛ւ որդի, դուն որ կրօնիդ ու հաւատքիդ համար ըմպեցիր ամենէն լեղի քացախը, դուն տակաւին պիտի շարունակես քու պապերուդ եւ նահատակներուդ հաւատքով ապրիլ...», եւ որբը, եկեղեցի կառուցեց: Նոյն ձայնը այս անգամ ըսաւ. «Հայո՛ւ որդի, թէ՛ւ քանդուեցան ու աներուեցան քու հոգեւոր ու մշակութային տաճարներդ, սակայն դուն պիտի շարունակես քու մշակութի տաճարիդ խնկարկել...», եւ որբը դպրոց կառուցեց: Նոյն աստուածային ձայնը կրկին անգամ ըսաւ. «Հայո՛ւ որդի, դուն որ կորսնցուցիր ընտանիքդ ու ընտանեկան օճախդ, տակաւին պիտի շարունակես վառ պահել օճախիդ կրակը...», եւ որբը տուն կառուցեց:

Մեր ժողովուրդը հուրի ու սուրի մեջէն անցաւ եւ անհաւաստի 102 տարի ետք ան կու գայ դարձեալ յիշելու իր նահատակներն ու անոնց թողած կտակը: Այո, մեր ժողովուրդը արհաւիրք տեսաւ, սակայն չկորսնցուց իր ինքնութիւնը, չուսահատեցաւ ու չտկարացաւ:

102 տարիներէ ի վեր, մենք կը յիշեցնենք ամբողջ աշխարհին, եւ յատկապէս արհնարբու թուրքին, որ մենք արդար իրաւունքներ ունինք, գորս պէտք է վերադարձուին մեզի, եւ եթէ պէտք ըլլայ, տակաւին հարիւրաւոր տարիներ պիտի շարունակենք մեր պահանջատիրական պայքարը: Մենք ողորմութիւն չենք պահանջեր, այլ մեր արդար իրաւունքները: Անդադար պէտք է գոչենք. «Ո՛վ արդարութեան շունչ, եկո՛ւր, քարսիրտ եւ խուլ պետութիւններուն խիղճը արթնցուր, որպէսզի անոնք ՏԵՍՆԵՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ»:

ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմ



ՀՈԳԵԻՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ԲԱՐՈՅԱՆՕՍՈՒԹԻՒՆ

«Սիրեցեք զիրար, ինչպես ես ձեզ սիրեցի»

Ըստ իրողության, կեանքի մեջ կան այնպիսի հոգեւոր արժեքներ, որոնց մասին չենք կրնար բացատրություն տալ, որովհետեւ անոնք ամենօրեայ ապրումներ են եւ կ'ապրուին տեղին, ժամանակին, կացութիւններուն եւ պայմաններուն պարտադրած ազդեցութեամբ: Այս արժեքներուն ամենէն թանկագինը Մէրն է:

Մէրը գերագոյնն է բոլոր առաքինութիւններուն եւ հայելին է քրիստոնէական հաւատքի արտայայտութեան: Անոր համար մենք մեր լաւագոյնը պէտք է ընենք գտնելու ու հասկնալու համար անոր իմաստն ու արժեքը:

Մէրը քրիստոնէական վարդապետութեան եւ անոր ապրուող կեանքին տարագն է. կարելի չէ առանց սիրոյ քրիստոնէական կրօնք երեւակայել, որովհետեւ Քրիստոս ինք թելադրեց մեզի սիրել մեր նմանները մեր անձերուն պէս, սիրել մեր նմանները ինչպէս ինք սիրեց մեզ: Մէրը ի սկզբանէ յառաջ եկաւ ստեղծագործութեան ժամանակ, Աստուած է անոր աղբիւրը: Նայինք կենդանական աշխարհին ու կենդանիներուն, անոնք կը պաշտպանեն ու կը կերակրեն իրենց ձագերը: Սիրոյ արտայայտութիւն է ինքնին մարդուն ստեղծագործութիւնը: Աստուծոյ հայրական սէրը, գոյթը եւ հովանին կը վայելենք ամէն օր:

Մէրը իր տեսակին մէջ տարբեր իմաստներ եւ ճիւղաւորումներ ունի: Նոր կտակարանի յունական բնագիրին մէջ ան կը յիշուի 4 տարբեր անուններով եւ իմաստներով. ինչպէս Էրոս, Մղորկէ, Ֆիլիա եւ Ակաբէ:

1.- Էրոսը, որմէ կու գայ անգլերէն էրոտիք բառը, երկու անձերու միջեւ մարմնական սեռային յարաբերութիւնն է: Ս. Գրիգոր Նազեանցի այս սէրին համար կ'ըսէ «ջերմ է այս սէրը, բայց անմատչելի է եւ շուտ անցնող»: Այս բառը վերցուած է Նոր Կտակարանէն աւելի ուշ:

2.- Մղորկէ. այս սէրը ժողովուրդի մը իր կառավարիչին հանդէպ ունեցած յարգանքին ու սիրոյ արտայայտիչն է, բայց սովորաբար գործածուած է ցոյց տալու համար նաեւ զաւակներուն ունեցած սիրոյ արտայայտութիւնը իրենց ծնողներուն նկատմամբ:

3.- Ֆիլիա. այս բառը շատ գործածուած է գիտութեան, իմաստութեան եւ այլ մարզերու մէջ, ցոյց կու տայ անձի մը նկատմամբ ունեցած անկեղծ սիրոյ, եւ կամ որպէս գերագոյն օրինակի եւ ռահվիրայի մը հանդէպ զգացումները. ինչպէս ուսուցիչի, գրագէտի, իմաստասերի... եւ ինչպէս Քրիստոս ինք երեք անգամ հարցուց Պետրոս Առաքեալին. «Պետրոս ս, կը սիրե՞ս զիս»: Գործածուած է նաեւ ամուսինի ու կնոջ միջեւ անկեղծ եւ յաւերժական սէրը արտայայտելու եւ բացատրելու համար:

4.- Ակաբէ. ամենաշատ գործածուած բառն է Նոր Կտակարանին մէջ ինչպէս նաեւ յիշուած է Հին Կտակարանին մէջ: Այս բառը բոլոր սէրերուն ալ իմաստով կրնայ գործածուիլ, ըլլա՛յ սէր Աստուծոյ նկատմամբ, սէր բարեկամի նկատմամբ, սէր եղբոր, իտեալի եւ օրինակելի մարդու, զաւակի, ընտանիքի եւ կամ զոյգերու միջեւ:

Մէրը ստեղծագործ եւ պտղատու աղբիւրն է բոլոր բարի գործերուն ու առաքինութիւններուն: Անոնք պարզ օրինակ մը. երբ զոյգ մը զիրար սիրեն, կ'որոշեն միանալ եւ ամուսնանալ: Եւ որպէս սիրոյ արտայայտութիւն կը ստեղծագործեն իրենց սիրոյ պտուղը՝ զաւակը, իրենց մէջ սիրոյ կապը ամրապնդելու համար: Զգարմանանք, որ մարդն ալ արարիչ է եւ ստեղծագործ, որովհետեւ իր մէջ ունի Աստուծոյ պատկերը: Մէրը, որուն համար կոչուած ենք, մեզ պէտք է մղէ որպէս մարդ ապրելու ներդաշնակ կեանք, հեռու բոլոր տեսակի ատելութենէ, եւ այդ մեր ներքին սէրը ի գործ դնելու: Աստուծոյ փառքը հիւսելու համար եւ կեանքը ապրելու իր ամենաքաղցր իմաստով ու արժեքներով:

Լուրջան Լոր. Պաշխեան

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Յարութիւնը կարելի չէ կեցնել

Գերմանիոյ մէջ գերեզման մը կայ, որուն վրայ հսկայ մարմարէ ու կրանիթէ քարեր իրարու կայցուած են եւ ծանր երկաթէ ճարմանդներով ամրացուած: Այս գերեզմանը կը պատկանի կնոջ մը, որ չէր հաւատարմեան յարութեան: Ան յամառօրէն իր կտակին մէջ փափաք յայտնած էր իր գերեզմանը այնքան ապահով ընելու, որ եթէ նոյնիսկ յարութիւն տեղի ունենար, իրեն չհասներ: Անոր շիրմաքարին վրայ արձանագրուած էր. «Այս գերեզմանը երբեք պէտք չէ բացուի»:

Ժամանակի ընթացքին քարերուն տակը պահուած հունտ մը սկսաւ աճիլ եւ կամացուկ մը հողէն դուրս եկաւ: Երբ կոճորը հասցաւ, քարի մեծ կտորները շարժեցան, այնպէս որ երկաթեայ ճարմանդները քակուեցան: Պզտիկ հունտը մեծ ծառ մը եղաւ եւ քարերը մէկդի հրեց: Հունտին պարունակած կենդանի հուժկու գորութիւնը պարզ ցոյցացուեց եւ Աստուածային զօրեղ ստեղծագործ Խօսքին, ըստ որուն օր մը պիտի կենդանանան բոլոր անոնք, որոնք գերեզմաններուն մէջն են: Ան նաեւ պիտի կենդանացնէ բոլոր անոնք, որոնք ծովերու մէջ ընկղմած են, այրած են կամ այլ կերպով կործանած: Այս բոլորը շատ դիւրին են Անոր համար, որ ոչինչէն, միայն Խօսքով, ստեղծեց ամբողջ տիեզերքը: Անհաւատութիւնը չի կրնար կասեցնել յարութիւնը: Սակայն յարուցեալ Քրիստոսի հանդէպ հաւատքը կը բանայ օրհնութեան դրները, եւ իր յարութիւնը մեզի համար կ'ապահովէ փառաւոր մարմին մը եւ երկնային տուն մը: Նոր մարմիններով վերստին պիտի միանանք մեր յարուցեալ հարազատներուն Յիսուսի հետ յաւիտեան ապրելու:

Պօղոս Առաքեալ կըսէ. «Յոյս ունիմ առ Աստուած... թէ մեռելներուն յարութիւն պիտի ըլլայ, թէ արդարներուն եւ թէ մեղաւորներուն: Եւ ես այս բանին համար կը ջանամ, որ ամէն ատեն մաքուր խղճմտանք ունենամ Աստուծոյ եւ մարդոց առջեւ» (Գործք Առաքելոց 24:15-16):

ԱՊՏԸԼՄՍԵՅ ՎԿԱՅ

Բուն անունով Ասեր, տասնմէկ տարեկան, ծագումով հրեայ, հովիւ տղայ մըն էր Ս. Ապտըլմսեհ եւ Պարսկաստանի մէջ ապրող բազմանդամ ընտանիքի մը զաւակը:

Օր մը, երբ իր հօրը ոչխարները կ'արածէր, ծանօթացաւ քրիստոնէայ պատանիներու, որոնք նոյնպէս կ'արածէին իրենց ոչխարները: Պատանի քրիստոնէաները խօսեցան իրեն Քրիստոսի մասին եւ հրեայ Ասերի խնդրանքով զինք քրիստոնէայ մկրտեցին՝ վերանունանելով Ապտըլմսեհ, որ կը նշանակէ Քրիստոսի ծառայ, եւ անոր ականջին անցուցին զինդ մը, որ խորհրդանիշ էր ծառայութեան:

Փոքրիկն Ապտըլմսեհ սկիզբը տան անդամներէն ծածուկ պահեց իր քրիստոնէութիւնը ընդունիլը եւ ապա մօրը յայտնեց: Մայրը ինք եւս ընդունեց Քրիստոս, մանաւանդ երբ պատանի Ապտըլմսեհ պատմեց այն երազը, ուր Քրիստոս երեւցած էր իրեն, ձեռքէն բռնելով հանած էր մութ գուրբէն եւ միացուցած հրեշտականման պատանիներու խումբին:

Առիթով մը, հայրը տեսաւ ականջին զինդը, հասկցաւ որ ան քրիստոնէայ դարձած է, անգթօրէն ծեծելէ ետք դաշոյնը քաշելով սպաննեց զաւակը, այն ջրհորին քով, ուր քրիստոնէայ մկրտուած էր: Այսպիսով պատանի քրիստոնէան բաժնուեցաւ իր երկրի ընկերներէն ու միացաւ երկինքի հրեշտականման պատանիներուն: Մայրը այս տեսնելով նոյն ջրհորին մէջ քրիստոնէայ մկրտուեցաւ: Քրիստոնէայ պատանիները ողբացին իրենց ընկերոջ մահը եւ միւս կողմէ ուրախացան անոր սրբութեան ու հաւատքին համար:

Լուրջան Լոր. Պաշխեան



"Pourquoi la résurrection de Jésus Christ est-elle si importante ?"

La résurrection de Jésus est importante pour plusieurs raisons. Tout d'abord, il témoigne de l'immense puissance de Dieu lui-même. Croire en la résurrection, c'est croire en Dieu. Si Dieu existe, et si il a créé l'univers et a le pouvoir sur elle, il a le pouvoir de ressusciter les morts. S'il n'a pas ce pouvoir, il n'est pas un Dieu digne de notre foi et de culte. Seul celui qui a créé la vie peut la ressusciter après la mort, Lui seul peut renverser la laideur de ce qui est mort et Lui seul peut retirer l'aiguillon qui est mort et la victoire sur la tombe (1 Corinthiens 15:54-55). En ressuscitant Jésus d'entre les morts, Dieu nous rappelle sa souveraineté absolue sur la vie et la mort.

Deuxièmement, la résurrection de Jésus est un témoignage de la résurrection des êtres humains, qui est un principe fondamental de la foi chrétienne. Contrairement à toutes les autres religions, le christianisme seul possède l'un des fondateurs, qui transcende la mort et qui promet que ses disciples feront de même. Toutes les autres religions ont été fondées par des hommes et des prophètes dont la fin a été la tombe. En tant que chrétiens, nous sommes réconfortés par le fait que notre Dieu s'est fait homme, mort pour nos péchés, et est ressuscité le troisième jour. Le tombeau ne pouvait pas le retenir. Il vit, et il siège aujourd'hui à la droite de Dieu le Père dans le ciel.

Dans 1 Corinthiens 15, Paul explique en détail l'importance de la résurrection du Christ. Certains de Corinthe ne croyaient pas en la résurrection des morts, et, dans ce chapitre Paul donne six conséquences désastreuses s'il n'y a pas de résurrection: 1) la prédication du Christ n'aurait pas de sens (v. 14), 2) la foi dans le Christ serait inutile (v. 14); 3) tous les témoins et les prédicateurs de la résurrection seraient menteurs (v. 15); 4) ne serait racheté du péché (v. 17); 5) tous les croyants anciens auraient péri (v. 18), et 6) les chrétiens seraient les plus à plaindre sur la terre (v. 19). Mais le Christ a en effet ressuscité des morts et "est devenu les prémices de ceux qui se sont endormis" (v. 20), assurant que nous allons le suivre dans sa résurrection.

La résurrection est la victoire triomphante et glorieuse pour chaque croyant. Jésus Christ est mort, a en Christ ressusciteront, et ceux qui restent et qui sont en vie à Sa venue seront changés et recevront de nouveaux et glorieux corps (1 Thessaloniens 4:13-18). Pourquoi la résurrection de Jésus-Christ est-elle si importante au salut ? Il a montré que Dieu a accepté le sacrifice de Jésus en notre nom. Cela prouve que Dieu a le pouvoir de nous élever d'entre les morts. Elle garantit que ceux qui croient dans le Christ qu'ils ne resteront pas morts mais seront ressuscités pour la vie éternelle. Tel est notre espoir béni ! été enseveli, et est monté au ciel le troisième jour selon les Ecritures. Et, il est de retour ! Les morts

Message du Prélat

La Résurrection de Jésus Christ

Le message de la Grande résurrection résonne à nouveau partout autour de nous. Les anges se réjouissent au Paradis pour les êtres humains et viennent sur la Terre pour partager la Bonne Nouvelle : Jésus est ressuscité.

Durant la Semaine sainte, nous avons communiqué avec les paroles, les travaux et les directives sacrés les plus importants de notre Sauveur, Jésus Christ notre Seigneur. Dieu a révélé Son amour infini, tandis que l'homme a révélé sa malice infinie et son ingratitude. Dieu se révèle et sacrifie son Fils unique pour sauver l'homme avec son message inconcevable, tandis que l'homme Lui tourne le dos avec une ingratitude incompréhensible.

Jésus, le donneur de l'immortalité, a été enterré en tant qu'homme, mais Il est ressuscité le troisième jour et avec Sa résurrection, Il nous offre la promesse de l'éternité. Le fils de Dieu, avec Sa résurrection, a remporté la victoire sur la mort et nous a accordé un don de Dieu, une Nouvelle Vie triomphale.

La fête de la Grande résurrection est la célébration de la victoire de la vie contre la mort.

Le peuple arménien était un des peuples qui a su mourir pour l'amour de la vie, qui a su comment le transformer en une source de lumière et d'espoir. Le peuple arménien a vu dans la Résurrection de Jésus, l'éternité et l'immortalité. Aujourd'hui, soyons prêts d'enterrer nos péchés comme l'hypocrisie, la jalousie, la haine, l'hostilité, l'orgueil, le matérialisme et tout autre péché similaire. Soyons prêts pour notre résurrection avec Jésus Christ, pour nous renouveler avec la Nouvelle Vie que Jésus nous emmène. Revigorons notre foi ensemble et marchons vers un avenir lumineux avec le souffle de la résurrection.

Voilà! Ceci est le message principal du miracle de la **GRANDE RÉSURRECTION!**

Archevêque Papken Tcharian

Youth
Jeunesse

U-TURN
A Lenten Reflection

Most people are familiar with the biblical story of "the prodigal son". A touching story it is, yet it's more than just that. It is the Gospel of Christ in a nutshell. The story, which can be found in the Gospel of St. Luke, goes like this: A wealthy man has two sons. One day, the younger son comes to the father and asks for his share of inheritance. The father, albeit offended, respects his son's choice and gives him his share. The younger son leaves his father's house and goes to a far away land, where he squanders all he has on parties and prostitutes, and on a lavish lifestyle. Before long, starvation strikes the land. He can't find a decent job, and suddenly he finds himself in a miserable situation, in need of a piece of bread... And so, he compromises himself to work on a pig farm, which for the Jews of that time was against their faith and religious principles!

One day, this younger prodigal son comes to his senses and realizes how foolish he has been by leaving the comfort of his father's house. He decides to go back home, but he doubts whether his father will accept him, after what he had done to him. To his surprise, the father welcomes him with arms wide open, and with unconditional love and acceptance. This doesn't seem right to the older brother, so he refuses to join the party the father has thrown to celebrate the return of his younger son. The father's answer to the older son's rejection is profound: "My son, you are always here with me, and everything I have is yours. But we had to celebrate and be happy, because your brother was dead, but now he is alive; he was lost, but now he has been found." (Luke 15:31-32).

Meditation

Where do you fit in this story?

We are all like prodigal sons, and we rebel against our heavenly Father from time to time. We are all prone to become judgemental towards sinners, and yet, as Henry Nouwen reminds us in his book "The Return of the Prodigal Son: A Story of Homecoming", we are all called upon to reflect the heart of the father towards everyone, and especially those who need it the most: the spiritually "dead" and the lost.

The story of the prodigal son is about making a U-TURN towards our heavenly Father, who is looking forward to embracing us with his unconditional love.

Father Kevhert Kosbakian




Մանօ թ էք նշանաւոր Հայ Թագուհիներուն

Դարերու ընթացքին, նշանաւոր հայ թագաւորներու կողքին ունեցած ենք նաեւ նշանաւոր հայ թագուհիներ: Փորձեցէք հետեւեալ նշանաւոր հայ թագուհիներու անունները տեղադրել խաչքառին մէջ:



Սաթենիկ, Սանդուխտ, Աշխէն, Փառանձեմ, Կատրանիդէ Հոփսիմմ, Ծահաւորուխտ, Գայիանէ:



ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Զատիկին ժողովրդական ընդհանրացած սովորութիւն է հաւկիթներ գոյնզգոյն ներկելն ու հաւկիթախաղ կազմակերպելը:

Ընդհանրապէս, աշխարհի բոլոր կրօններուն մէջ հաւկիթը կարեւոր տեղ ունեցած է, մինչեւ իսկ հին հռոմէացիներն ու յոյները ձու կը նուիրէին իրենց չաստուածներուն:

Միջնադարու աստուածաբան Գրիգոր Տաթեւացին կարմիր ներկուած հաւկիթին մասին հետեւեալ տեղեկութիւնները տուած է. «Զատիկին կարմիր հաւկիթ կը ներկենք եւ...մի այն Զատիկին հաւկիթ կը ներկենք, որովհետեւ հաւկիթը օրինակն է ամբողջ աշխարհի, եւ ինչպէս իմաստունները կ'ըսեն դուրսի կեղեւը կը նմանի երկինքին, մաշկով տոպրակը օդին, սպիտակ բաժինը ջուրին, դեղինն ալ, այսինքն մէջը, երկիրն է: Իսկ կարմիր ներկը կը նշանակէ, թէ ամբողջ աշխարհը փրկուեցաւ Քրիստոսի արիւնով: Իսկ մենք կարմիր հաւկիթը մեր ձեռքերուն մէջ առնելով կը հռչակենք մեր փրկութիւնը: Այդ է պատճառը, որ (մեր պահքը սկսելու եւ աւարտելու համար) նախ կարմիր հաւկիթ կ'ուտենք եւ յետոյ ուրիշ կերակուրներ:

Ուրեմն հաւկիթը կեանքի եւ յարութեան գաղափարը կու տայ մեզի, եւ կարմիր գոյնը կը խորհրդանշէ Յիսուսի արիւնը, որ մարդոց փրկութեան համար թափուեցաւ:

Զատիկ բառը գործածուած է Ոսկեդարուն, երբ մեր թարգմանիչ վարդապետները Աստուածաշունչը կը թարգմանէին, Հին Կտակարանին մէջ գործածուող Պասէք տօնը, որ հրեաներու ամենամեծ եւ յարգուած տօներէն մէկն էր եւ կը յիշեցնէր հրեաներու Եգիպտոսէն դէպի խոստացուած երկիր մեկնիլը: Զատիկ, հրեաներու համար կը նշանակէ անցնիլ, զատուիլ կամ բաժնուիլ:

Իսկ քրիստոնէութեան մէջ, հայերուն համար, ան կը խորհրդանշէ ազատութիւն, ազատութիւն մեղքէն ու մահէն:

Ներկայիս Հայ Եկեղեցին Զատիկը կը նշէ զարնան գիշերահաւասարին յաջորդող լուսնի լրման առաջին Կիրակի օրը (35 օրուան շարժականութեամբ, Մարտ 21-էն ետք մինչեւ Ապրիլ 26):

ԱՂՈԹՔ

Ո՛վ գթած Հայր, բարեխնամ արարիչ բոլոր արարածներուն, ընդունէ Քու ծառաներուդ պաղատանքը այս երեկոյեան ժամուն, Դուն, որ առատաձեռն ես ամենուն հանդէպ, Քու բարի պարգեւներովդ ողորմէ՛, Տէր, ամբողջ աշխարհին, Քու սուրբ եկեղեցիդ, հիւանդներուն, խոստովանողներուն, ապաշխարողներուն եւ ննջեցեալներու հոգիներուն. բոլորիս կարիքներդ գոհացնու մեր խնդրածէն եւ հասկցածէն աւելի, որովհետեւ

Դուն՝ ամենակալ Տէր, գիտես մեր պետքերը:
Քեզի, Որդիիդ եւ ամենասուրբ Հոգիիդ կը վայելէ փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԱՎՈՑ ԼՍԱՐԱՆՆԵՐ



Վերանորոգումը Հին Կտակարանին մէջ:
Աստուած է աղբիւրը վերանորոգման
ա-Ըստ Սաղմոսաց Վարդապետին «ուղիղ կողմ նորոգել» (Սղ 51.10)
բ-Ըստ Սաղմոսաց Վարդապետին «երկրին երեսը նորոգել» (Սղ 104.30)

Վերանորոգումը Նոր Կտակարանին մէջ:
Բրիտանոս ինքն է աղբիւրը վերանորոգման
ա-Բարի Սամարացիին առակը (Ղկ 10.25-37)
բ-Կորնտոս ոչխարին առակը (Մտ 18.12-14)
գ-Երկրպիկ կոյրելու բժշկութիւնը (Յե 9.6-7)

Վերանորոգումը Նոր Կտակարանին մէջ:
Բրիտանոս ինքն է աղբիւրը վերանորոգման
ա-Հին ուխտը վերածեց նոր ուխտի (Մտ 26.28)
բ-Հին օրէնքը՝ նոր օրէնքի (Յե 13.34)
գ-Հին մարդը՝ նոր մարդու (Եփ 4.24)

Վերանորոգումը՝
եկեղեցւոյ առաքելութեան առանցքը
Վերանորոգման հիւանդականը՝
Բրիտանոսական հայեցակէտով:
Վերանորոգման հիւանդականը՝
Ապոստոլական հայեցակէտով:

Մանրասնամութիւններու համար,
դիմեցէք ձեր տեղւոյն եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւին եւ կամ
քարտուղարութեան: